



Համաձայնեցված է
 Հայաստանի Հանրապետության
 ֆինանսների նախարար
 Ա. Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության
 կառավարության արհեստր պետական
 եկամուտների կոմիտեի նախագահի
 ժամանակավոր պաշտոնակատար
 Ա. Աֆրիկյան
 12 հունվարի 2012թ.
 N 1

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Չ Ա Բ Ա Ն ՈՒ Մ
Դ Ր Ա Մ Ա Կ Ա Ն (Փ Ո Ղ Ա Յ Ի Ն) Շ Ա Կ ՈՒ Մ Ն Ե Ր Ի Ա Ր Տ Ա Ր Ժ ՈՒ Յ Թ Ո Վ Գ Ո Վ Ա Ջ Դ Մ Ա Ն Ե Վ
Տ Ր Ա Մ Ա Դ Ր Մ Ա Ն, Խ Ա Ղ Ա Դ Ր ՈՒ Յ Ք Ն Ե Ր Ի (Գ Ր Ա Ջ Ն Ե Ր Ի) Ա Ր Տ Ա Ր Ժ ՈՒ Յ Թ Ո Վ
Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

“Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին” ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական (փողային) շահումները կարող են գովազդվել և տրվել միայն ՀՀ դրամով: Օրենքի իմաստով “Հայաստանի Հանրապետության տարածք” հասկացությունը համապատասխանում է “Պետական սահմանի մասին” ՀՀ օրենքով տրված հասկացությանը (այդ մասին պարզաբանվել է ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 11.10.2005թ. “Հայաստանի Հանրապետությունում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ” N 3 պաշտոնական պարզաբանմամբ /2-րդ կետ/):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն ՀՀ տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են ՀՀ դրամով (բացառությամբ՝ Օրենքով նախատեսված դեպքերի): ՀՀ տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները, սյապահովագրավճարներն ու սյապահովագրական հատուցումները, ընդունվում են և իրականացվում են ՀՀ դրամով (բացառությամբ՝ Օրենքով նախատեսված դեպքերի): Ըստ էության, խաղադրույքների (գրազների) իրականացումը չի ներառվում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով թվարկված գործարքների մեջ:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում են.**



1. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման համար կարևոր է, որ դրամական (փողային) շահումները գովազդվեն կամ տրամադրվեն ՀՀ տարածքում: Այս տեսանկյունից ինտերնետային կայքերում (ինտերնետ միջավայրում) փողային շահումների արտարժույթով գովազդելը չի դիտվում որպես Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, եթե գովազդի մեջ միաժամանակ նշվում է դրամային համարժեքը:

2. Եթե ՀՀ տարածքում չգտնվող հաշվից դրամական (փողային) շահումները փոխանցվում են ՀՀ տարածքում չգտնվող համակարգերի միջոցով, ապա այդ ընթացակարգերով վճարումները չեն համարվում ՀՀ տարածքում կատարված:

3. Խաղադրույքների (գրազների) արտարժույթով իրականացման դեպքում չեն կիրառվում Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները:

4. Սույն պաշտոնական պարզաբանումը վերաբերում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ինտերնետ տոտալիզատորների կազմակերպիչների կողմից խաղադրույքների (գրազների) և դրամական (փողային) շահումների իրականացմանը, ինչպես նաև ինտերնետային կայքերում (ինտերնետ միջավայրում) նրանց կողմից կազմակերպվող ինտերնետ տոտալիզատորներին վերաբերող փողային շահումները գովազդելուն:

